ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք. Երևան «24» 02 2020թ № 298-Ա

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ և ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ԲՅՈՒՋԵՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման 11-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության 2020 թվականի ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների

իրականացման պետական աջակցության 2020 թվականի ծրագրի միջոցառումների ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի:

3) Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության 2020 թվականի ծրագրի բյուջեն՝ համաձայն N 3 հավելվածի:

4) Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության շրջանակներում կազմակերպվող միջազգային ցուցահանդեսներին կազմակերպությունների եվ անհատ ձեռնարկատերերի մասնակցության աջակցության ենթակա փոխհատուցվող ծախսերի տրամադրման կարգը՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանին՝

1) Սույն հրամանը հաստատվելուց հետո 10-օրյա ժամկետում ներկայացնել նախարարի հրամանի նախագիծ՝ սույն հրամանից բխող ծրագրային միջոցառումների իրականացման և աշխատանքների կազմակերպման նպատակով հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին:

2) Սույն հրամանը հաստատվելուց հետո 20-օրյա ժամկետում ներկայացնել կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրի օրինակելի ձևը:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի տեղակալ Անահիտ Խեչոյանին՝ ապահովել սույն հրամանի տեղադրումը Նախարարության պաշտոնական կայքէջում:

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Էկոնոմիկայի նախարարի
2020 թվականի
փետրվարի 24-ի N 378-Ա հրամանի

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ և ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

I. ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Հայաստանի Հանրապետության կայուն տնտեսական զարգացման տեսանկյունից Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարևորում է արտահանմանն ուղղված պետական աջակցությունը՝ համապատասխան գործիքների կիրառմամբ:

2. 2013 թվականից սկսած Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից մեկնարկել է Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման շարունակական ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), որն ուղղված է արդյունաբերական արտադրանքի (ծառայությունների) արտահանելի հատվածի ընդլայնմանը և արտահանման ներուժ ունեցող կազմակերպությունների կարողությունների զարգացմանը:

3. 2019 թվականի ընթացքում ծրագրի իրականացման շրջանակներում շուրջ 300 արդյունաբերական կազմակերպություններ ստացել են պետական աջակցություն տարբեր ուղղություններով, ինչը դրական է ազդել այդ ընկերությունների արտահանման և արտադրության ծավալների աճի վրա: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են նաև մի շարք համաժողովներ, շնորհանդեսներ, գործարար հանդիպումներ, դիստրիբյուտորական այցեր և այլ միջոցառումներ, մասնավորապես՝

4. **գործարար համաժողովների (ֆորումների), շնորհանդեսների, ինչպես նաև այլ համանման միջոցառումների մասնակցություն և (կամ) կազմակերպում.** կազմակերպվել կամ մասնակցություն է եղել թվով 2 գործարար համաժողովների,

որոնց շրջանակներում կազմակերպվել են 131 B2B հանդիպումներ և ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ:

5. **արդյունաբերության ոլորտի ընկերություններին օժանդակության ցուցաբերում՝ ֆինանսական գործիքների կիրառմամբ.**

ա. արտադրական գործունեության վարկավորման մասնակի սուբսիդավորում. Սուբսիդավորվել է թվով 10 սուբյեկտ:

6. հայկական ապրանքների նպատակային շուկաներում առաջմղում, հայկական ապրանքների ներկայացում, շուկայական տեղեկատվության ապահովում.

ա. օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների կազմակերպում և իրականացում. Մանակցություն է եղել 2019 թվականի նոյեմբերի 5-ից 20-ը Չինաստանի Շանհայ քաղաքում կազմակերպված Չինաստանի 2-րդ ներմուծման միջազգային ցուցահանդեսին:

Հայաստանը մասնակցել է ազգային տաղավարով՝ ներկայացնելով հայկական մշակույթը, զբոսաշրջությունը, Հայաստանի տնտեսության առավելությունները, արդյունաբերության զարգացման ուղին, արտահանման և ներդրումային հնարավորությունները, կազմակերպվել են հայկական ընկերությունների արտադրատեսակների, մասնավորապես խմիչքի, շոկոլադի և չրերի համտես: Հայկական տաղավարում ցուցադրվել են նաև Հայաստանի մշակույթը և տնտեսությունը ներկայացնող տեղեկատվական գրքույկներ, թերթիկներ և տեսահոլովակներ:

բ. ցուցահանդեսների կազմակերպում և մասնակցության ապահովում. Կազմակերպվել և (կամ) մասնակցություն է եղել 7 միջազգային ոլորտային ցուցահանդեսներին, որոնց արդյունքում կնքվել է շուրջ 371.4 մլն դրամի չափով արտահանման պայմանգրեր:

գ. գործարար կապերի հաստատում. Կազմակերպվել են օտարերկրյա 7 ընկերությունների ներկայացուցիչների ճանաչողական այցեր Հայաստան՝ ապահովելով ավելի քան 105 գործարար կապերի հաստատում:

II. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

4. Ծրագրի մշակման համար հիմք են՝

1) «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման 11-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունը.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2011 թվականի դեկտեմբերի 15-ի նիստի N 49 արձանագրության 9-րդ կետով հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը» (այսուհետ՝ ռազմավարություն):

III. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

5. Ծրագրի նպատակներն են՝

1) ռազմավարությամբ սահմանված նպատակների իրագործման ապահովումը.

2) պետական աջակցության գործիքների կիրառման միջոցով արդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալների ավելացման խթանումը.

3) արտահանելի հատվածի ընդլայնումը, արտահման դիվերսիֆիկացմանը նպաստելը.

4) արտաքին շուկաներում հայկական արտադրանքի ներկայացվածությանը նպաստելը.

5) տնտեսության տեխնիկական և տեխնոլոգիական վերազինմանն աջակցելը.

6) Հայաստանի Հանրապետության մարզերում տնտեսական և ներդրումային ակտիվության բարձրացմանը նպաստելը:

6. Ծրագրի նպատակների ապահովման ուղղությամբ նախատեսվում է՝

1) պետական աջակցության առկա գործիքների կիրառման շարունակականության և արդիականացման ապահովում.

2) արտաքին շուկաներում հայկական ապրանքների առաջմղման գործիքների կիրառում.

3) արդյունաբերական ոլորտներում բարձրորակ կադրերով ապահովման ու զարգացման նպատակով ուսուցողական ծրագրերի իրականացում՝ ըստ անհրաժեշտության:

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

7. Ծրագրի իրականացման սկզբունքներն են՝

1) սույն Հավելվածի 8-րդ կետով նախատեսված 2 ա, 3 ա, գ, 4 և 5 միջոցառումներն իրականացվում են մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կառույցների միջոցով.

2) պետություն-մասնավոր հատված համագործակցության խորացումը.

3) ծրագրի շրջանակներում տրամադրվող պետական աջակցությունը տարածվում է մշակող արդյունաբերության ոլորտների կազմակերպությունների վրա.

ա. սույն Հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի ա. պարբերությամբ նախատեսված միջոցառման շրջանակներում պետական աջակցությունը տարածվում է նաև պաշտպանական և ազգային անվտանգության կարիքների համար արտադրություն իրականացնող և ճարտարագիտական ծառայություններ մատուցող կազմակերպությունների վրա:

4) միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ փոխհամաձայնությունների շրջանակներում համատեղ ծրագրերը կիրականացվեն համաֆինանսավորման սկզբունքով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

V. ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

8. Ռազմավարության իրականացման ուղղությամբ նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

1) գործարար համաժողովների (ֆորումների), շնորհանդեսների, ինչպես նաև այլ համանման միջոցառումների մասնակցություն և (կամ) կազմակերպում. Նախատեսված միջոցառումները նպատակաուղղված են օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում օտարերկրյա ու հայկական ընկերությունների, պոտենցիալ ներդրողների, սփյուռքահայ գործարարների, պաշտոնական պատվիրակությունների մասնակցությամբ Հայաստանի Հանրապետության տնտեսության, նրա առանձին ոլորտների և կազմակերպությունների զարգացման հնարավորությունների, ներդրումային ծրագրերի

ներկայացմանը և քննարկմանը: Միջոցառման շրջանակներում ակնկալվում է մասնակցել և (կամ) կազմակերպել առնվազն 6 շնորհանդես և (կամ) համաժողով և (կամ) այլ համանման միջոցառումներ, անհրաժեշտության դեպքում, ենթամիջոցառման շրջանակներում, ներգրավելով շահագրգիռ պետական կառավարման մարմինների պաշտոնական ներկայացուցիչներին (ծախսերի փոխհատուցմամբ), իսկ տնտեսվարող սուբյեկտների ներկայացուցիչներին աջակցությունը կարող է տրամադրվել՝ օտարերկրյա պետությունում կազմակերպվող միջոցառումներին մասնակցության համար կատարված ծախսերի փոխհատուցման ձևով՝ մինչև 50 տոկոսի չափով:

2020-2021 թվականներին նախատեսվում են կազմակերպել և (կամ) մասնակցել հետևյալ միջոցառումներին.

- ✓ «Հայաստանը որպես ԵԱՏՄ տեխնոլոգիաների և գործարանների արտահանման հարթակ» երկօրյա համաժողով՝ Հայաստանում մարտ
- ✓ «Եվրասիական շաբաթ» 2020 Բելառուս, Մինսկ
- ✓ Ապահովել մասնակցություն 2021 թվականի մարտի 24-ից 26-ը ԱՄԷ Դուբայ քաղաքում տեղի ունենալիք Ամենամյա ներդրումային 10-րդ համաժողովին (AIM):

Այլ միջոցառումները կիրականացվեն ըստ անհրաժեշտության՝ նախապես քննարկելով ոլորտի և շահագրգիռ այլ ներկայացուցիչների հետ:

2) մշակող արդյունաբերության ոլորտի ընկերություններին օժանդակության ցուցաբերում՝ ֆինանսական գործիքների կիրառմամբ.

ա. արտադրական գործունեության վարկավորման մասնակի սուբսիդավորում.

ենթամիջոցառումը նախատեսում է մշակող արդյունաբերության ոլորտի, պաշտպանական և ազգային անվտանգության կարիքների համար արտադրություն իրականացնող և (կամ) ճարտարագիտական ծառայություններ մատուցող, ինչպես նաև սույն 9-րդ կետով սահմանված սահմանամերձ համայնքներում արտադրություն իրականացնող կազմակերպություններին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում՝ հիմնական միջոցների բարելավման կամ ձեռքբերման հիմնական նպատակով: Սուբսիդավորվելու են վարկի գումարի մինչև 150 մլն ՀՀ դրամ մասը, համապատասխան վարկի մասի տոկոսադրույքի 5 (հինգ) տոկոսային կետին համարժեք գումարը վարկի առաջին 2 (երկու) տարվա համար, «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ ֆոնդային բորսայում ցուցակված տնտեսվարողների դեպքում՝ մինչև 5 (հինգ) տարվա

համար, իսկ Հավելվածի 1-ի 9-րդ կետով սահմանված սահմանամերձ համայնքներում գործունեություն իրականացնող տնտեսվարողներին տրամադրվող վարկերը սուբսիդավորվելու են Հավելվածի 1-ի 9-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված չափով: Ենթամիջոցառման շրջանակներում ակնկալվում է վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման աջակցություն տրամադրել առնվազն 10 սուբյեկտի:

3) հայկական ապրանքների նպատակային շուկաներում առաջմղում, հայկական ապրանքների ներկայացում, շուկայական տեղեկատվության ապահովում.

ա. օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների կազմակերպում և իրականացում ենթամիջոցառման շրջանակներում նախատեսվում է գովազդային արշավների կազմակերպում, այդ թվում՝ հայկական արտադրանքի վերաբերյալ բուկլետների և կատալոգների հրատարակում, արտահանման շուկաների վերաբերյալ տեղեկատվական նյութերի, այդ թվում տվյալների բազաների ձեռքբերում և տրամադրում ընկերություններին, հայկական բրենդների ձևավորման, օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում հայկական արտադրանքի համտեսների, շնորհանդեսների, մրցույթների ու նորաձևության ցուցադրությունների, ինչպես նաև այլ նմանատիպ միջոցառումների մասնակցության և (կամ) կազմակերպմանն աջակցություն, անհրաժեշտության դեպքում, ենթամիջոցառման շրջանակներում, ներգրավելով շահագրգիռ պետական կառավարման մարմինների պաշտոնական ներկայացուցիչներին: Ենթամիջոցառման շրջանակներում նախատեսվում է նաև միջոցառումներին պետական կառույցների ներկայացուցիչների մասնակցության ապահովում: Ընդհանուր առմամբ, ենթամիջոցառման շրջանակներում ակնկալվում է նպատակային շուկաներում և (կամ) Հայաստանի Հանրապետությունում տեղական արտադրանքի առաջմղման առնվազն 5 միջոցառման կազմակերպում և (կամ) մասնակցություն:

2020-2021 թվականներին նախատեսվում են կազմակերպել և (կամ) մասնակցել հետևյալ միջոցառումներին.

- ✓ Մասնակցություն Չինաստանի Շանհայ քաղաքում կազմակերպվելիք Չինաստանի 3-րդ ներմուծման միջազգային ցուցահանդեսին (CIIE 3rd),
- ✓ ՌԴ Արխանգելսկի մարզում կազմակերպել հայկական մշկաող արդյունաբերության արտադրանքի ներկայացում:

Այլ միջոցառումները կիրականացվեն ըստ անհրաժեշտության՝ նախապես քննարկելով ոլորտների ներկայացուցիչների և շահագրգիռ այլ մարմինների հետ:

բ. ցուցահանդեսների կազմակերպում և մասնակցության ապահովում ենթամիջոցառման շրջանակներում նախատեսվում է թիրախային շուկաներում և Հայաստանում մշակող արդյունաբերության ոլորտների կազմակերպություններին ցուցահանդեսներին մասնակցության աջակցության տրամադրում: Օտարերկրյա պետությունում կամ Հայաստանում ցուցահանդեսներին մասնակցությունը և (կամ) կազմակերպումը կարող են լինել հետևյալ ձևաչափերով՝ **միասնական հայկական տաղավարով մասնակցություն**. այս դեպքում մասնակցության կազմակերպումն իրականացվում է միասնական տաղավարի սկզբունքով, որի վարձակալության, կառուցապատման, դիզայնի և դրա հետ կապված սարքավորումների վարձակալության, մասնակիցների գրանցման, ինչպես նաև կազմակերպչական ծախսերն (պետական կառույցը ներկայացնող անձի գործուղման ծախսեր) իրականացվում են ծրագրի շրջանակներում՝ մինչև 50 տոկոս համաֆինանսավորմամբ: **Առանց միասնական տաղավարի մասնակցություն**. այս դեպքում տաղավարների ձեռքբերման, կազմակերպչական աշխատանքների իրականացման մինչև 50 տոկոսն իրականացվում է համաֆինանսավորման սկզբունքով: **Անհատական մասնակցություն**. այս դեպքում ընկերությունները, նախապես համաձայնեցնելով Նախարարության հետ, մասնակցում են ցուցահանդեսներին՝ ներկայացնելով և հիմնավորելով ծախսերը, ստանում են փոխհատուցում՝ մինչև 50 տոկոսի չափով: Ընդհանուր առմամբ, ենթամիջոցառման շրջանակներում ակնկալվում է աջակցել ընկերություններին՝ առնվազն 7 ցուցահանդեսի մասնակցելու նպատակով: Ցուցահանդեսների կազմակերպման և (կամ) մասնակցության իրականացվում են ըստ անհրաժեշտության՝ ոլորտի ներկայացուցիչների հետ համաձայնեցված և (կամ) շուկայի պահանջարկի ուսումնասիրությունների հիման վրա:

2020-2021 թվականներին նախատեսվում են կազմակերպել և (կամ) մասնակցել հետևյալ ցուցահանդեսներին.

- ✓ MosShoes 2020 սեպտեմբեր – կոշիկի և կաշվե իրերի ցուցահանդես
- ✓ JUNWEX 2020 սեպտեմբեր– ոսկեգործական իրերի ցուցահանդես՝ սեպտեմբեր ՌԴ Մոսկվա

- ✓ IphEB դեղագործական ռուսական ցուցահանդես Սանկտ Պետերբուրգ 2020 թվական ապրիլի 15-ից 17-ը
- ✓ ANUGA – սննդարդյունաբերության ցուցահանդես Գերմանիա
- ✓ PRODEXPO 2021
- ✓ CPM 2021 փետրվար-մարտ

Այլ ցուցահանդեսները կիրականացվեն ըստ անհրաժեշտության՝ նախապես քննարկելով ոլորտի ներկայացուցիչների հետ:

գ. գործարար կապերի հաստատում ենթամիջոցառման շրջանակներում նախատեսվում է աջակցության տրամադրում՝ Հայաստանի Հանրապետություն օտարերկրյա գործարարների, դիստրիբյուտորների, մասնագետների, շահագրգիռ կառույցների ներկայացուցիչների գործարար այցելության, տեղական արտադրողների օտարերկրյա պետություն գործնական այցելությունների կազմակերպման նպատակով: Սույն միջոցառումը կնպաստի աշխատանքային կապերի ստեղծմանը և հնարավոր արտահանման գործընկերների ձեռքբերմանը: Ընդհանուր առմամբ, ենթամիջոցառման շրջանակներում ակնկալվում է աջակցել (կազմակերպել) արտահանմանն օժանդակող կառույցների, դիստրիբյուտորների առնվազն 60 ներկայացուցչի այցելությանը Հայաստանի Հանրապետություն և (կամ) տեղական արտադրողների այցելությանը օտարերկրյա պետություն: Ակնկալվում է արդյունաբերական ոլորտի տնտեսվարող սուբյեկտներին ցուցաբերել աջակցություն՝ կատարված ծախսերի փոխհատուցման ձևով՝ մինչև 50 տոկոսի չափով:

4) **ուսումնական դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում** միջոցառման շրջանակներում նախատեսվում է մշակող արդյունաբերության ոլորտների ընկերությունների և ազատ ունկնդիրների կարողությունների զարգացում: Մասնավորապես՝ նախատեսվում է արդիական տեխնոլոգիաների ու նեղ մասնագիտացված ուղղություններով Հայաստանում և (կամ) օտարերկրյա պետությունում ուսուցման ու վերապատրաստման կազմակերպում և անհատական խորհրդատվության տրամադրում՝ ներգրավելով որակավորված մասնագետներ պետական, մասնավոր, գիտական շրջանակներից, այդ թվում՝ օտարերկրյա պետությունից: Սույն միջոցառումը կարող է ներառել արտադրության կազմակերպման, մարքեթինգի, մտավոր սեփականության իրավունքի, ֆինանսական հոսքերի կառավարման, ապահովագրության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների, ինչպես նաև մշակող

արդյունաբերության ոլորտների արհեստագործական և այլ մասնագիտական դասընթացների իրականացում: Միջոցառման շրջանակներում ակնկալվում է ապահովել առնվազն 1 դասընթացի կազմակերպում, ընդ որում՝ դասընթացներն իրականացվում են ըստ անհրաժեշտության՝ ոլորտի ներկայացուցիչների հետ քննարկումների արդյունքում համաձայնեցված և (կամ) շուկայի պահանջարկի ուսումնասիրությունների հիման վրա:

5) **արտահանման բնագավառում ծագող խնդիրների և դրանց լուծմանն ուղղված հետազոտության իրականացում** ենթամիջոցառման շրջանակներում ակնկալվում է իրականացնել 1 հետազոտություն:

Միջոցառումը կիրականացվի ըստ անհրաժեշտության՝ մշակող արդյունաբերության ոլորտների կազմակերպությունների և ՀՀ էկոնոմիկայի նախարարության առաջարկների հիման վրա:

9. Սույն ծրագրի 8-րդ կետով նախատեսված միջոցառումների շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 30-Ն որոշմամբ հաստատված ցանկում ներառված սահմանամերձ համայնքներում գործունեություն իրականացնող կազմակերպություններին աջակցությունը տրամադրվում է հետևյալ սկզբունքներով՝

1) սույն ծրագրի 8-րդ կետի 1-ին ենթակետի, 2-րդ ենթակետի «ա» պարբերության, 3-րդ ենթակետի «բ» (առանց միասնական տաղավարի և անհատական մասնակցություն) և «գ» պարբերությունների մասով ծախսերի փոխհատուցում և (կամ) համաֆինանսավորում՝ մինչև 75 տոկոսի չափով.

2) սույն ծրագրի 2-րդ ենթակետի «ա» պարբերության մասով տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորում մինչև 5 (հինգ) տարվա վճարման ենթակա տոկոսագումարները՝ մինչև 9 (ինը) տոկոսային կետին համարժեք գումարի չափով:

VI. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

10. **Սույն ծրագրի 8-րդ կետով նախատեսված միջոցառումները կիրականացվեն Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի ֆինանսավորմամբ**՝ 528,000.0 հազ. դրամի չափով, և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին (մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի համաֆինանսավորմամբ):

11. Սույն ծրագրի 8-րդ կետով նախատեսված 2.1, 3.1, 3.3, 4 և 5 միջոցառումների շրջանակներում հայտարարված մրցույթի արդյունքով հաղթող ճանաչված ընկերություններին կարող են տրամադրվել կանխավճարներ:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Էկոնոմիկայի նախարարի
2020 թվականի
փետրվարի 14-ի N 28Ա-Ա հրամանի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ ԾՐԱԳՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ

NN ը/կ	Միջոցառումը	Ակնկալվող արդյունքը	Կատարողը	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
1	2	3	4	5	6
1.	Գործարար համաժողովներին (ֆորումների), ինչպես նաև այլ համանման միջոցառումներին մասնակցություն և (կամ) կազմակերպում	1. Ակնկալվում է մասնակցել և (կամ) կազմակերպել առնվազն 6 շնորհանդես և (կամ) համաժողով և (կամ) արտագնա քարոզարշավ և (կամ) այլ համանման միջոցառումներ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2020թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ
2.	Մշակող արդյունաբերության ոլորտների				

	ընկերություններին օժանդակության ցուցաբերում՝ ֆինանսական գործիքների կիրառմամբ				
	1) արտադրական գործունեության վարկավորման մասնակի սուբսիդավորում	ենթամիջոցառման շրջանակներում ակնկալվում է վարկի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման աջակցություն տրամադրել առնվազն 10 սուբյեկտի	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2020թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ
3.	Հայկական ապրանքների՝ նպատակային շուկաներում առաջմղում, հայկական ապրանքների ներկայացում, շուկայական տեղեկատվության ապահովում				
	1) օտարերկրյա պետությունում (կամ) Հայաստանում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների կազմակերպում և իրականացում	Ենթամիջոցառման շրջանակներում ակնկալվում է առնվազն 5 հատ արտերկրում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների կազմկերպում և իրականացում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2020թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ

	2) ցուցահանդեսների կազմակերպում և մասնակցության ապահովում	Ենթամիջոցառման շրջանակներում ակնկալվում է կազմակերպել և (կամ) մասնակցել առնվազն 7 ցուցահանդեսի	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2020թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ
	3) գործարար կապերի հաստատում	Ենթամիջոցառման շրջանակներում ակնկալվում է աջակցել (կազմակերպել) արտահանմանն օժանդակող կառույցների, դիստրիբյուտորների առնվազն 60 ներկայացուցչի այցելությանը Հայաստան և (կամ) տեղական արտադրողների գործարար այցելությանը օտարերկրյա պետություն	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2020թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ
4.	Ուսումնական դասընթացների ծրագրի մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում	Միջոցառման շրջանակներում ակնկալվում է ապահովել առնվազն 1 դասընթացի կազմակերպում և իրականացում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2020թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ
5.	Արտահանման բնագավառում ծագող խնդիրների և դրանց լուծմանն ուղղված հետազոտության իրականացում	Միջոցառման շրջանակներում ակնկալվում է իրականացնել 1 հետազոտություն: Միջոցառումը կիրականացվի ըստ անհրաժեշտության՝ մշակող արդյունաբերության ոլորտների կազմակերպությունների և ՀՀ էկոնոմիկայի նախարարության առաջարկների հիման վրա:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2020թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության
Էկոնոմիկայի նախարարի
2020 թվականի
դեկտեմբերի 24-ի N 288-Ա հրամանի

ԲՅՈՒՋԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Հ/Հ	ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	Գումար (հազար դրամ)
1	**Գործարար համաժողովներին (ֆորումների), ինչպես նաև այլ համանման միջոցառումներին մասնակցություն և (կամ) կազմակերպում**	**40,000.0**
2	Մշակող արդյունաբերության ոլորտների ընկերություններին օժանդակության ցուցաբերում՝ ֆինանսական գործիքների կիրառմամբ	**102,000.0**
2.1	արտադրական գործունեության վարկավորման մասնակի սուբսիդավորում	**102,000.0**
3	Հայկական ապրանքների՝ նպատակային շուկաներում առաջ-մղում, հայկական ապրանքների ներկայացում, շուկայական տեղեկատվության ապահովում	**381,000.0**
3.1	օտարերկրյա պետությունում հայկական արտադրանքի վերա-բերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների կազմակերպում և իրականացում	43,000.0
3.2	ցուցահանդեսների կազմակերպում և/կամ մասնակցության ապահովում	337.000.0
3.3	Գործարար կապերի հաստատում	1000.0
4	**Ուսումնական դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում**	**5,000.0**

5	Արտահանման բնագավառում ծագող խնդիրների և դրանց լուծմանն ուղղված հետազոտության իրականացում	-
ԸՆԴԱՄԵՆԸ		528,000.0

Հավելված N 4
«24»«02» 2020թ.

Կ Ա Ր Գ

ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույնով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության արտահանման ուղղվածություն ունեցող մշակող արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի արտերկրում կազմակերպվող միջազգային ցուցահանդեսներին մասնակցության աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները:

II. Աջակցության տրամադրման պայմանները

2. Աջակցությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության արտահանման ուղղվածություն ունեցող մշակող արդյունաբերության ոլորտներում գործունեություն իրականացնող արդյունաբերական կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին (այսուհետ՝ կազմակերպություն):

3. Աջակցությունը տրամադրվում է հետևյալ ձևաչափերով կազմակերպվող միջազգային ցուցահանդեսներին մասնակցության համար.

1) միասնական «հայկական» տաղավարով,

2) առանց միասնական տաղավարի՝ կենտրոնացված մասնակցություն,

3) անհատական մասնակցություն:

4. Աջակցությունը տրամադրվում է ցուցահանդեսի մասնակցության և կազմակերպչական ծախսերում մինչև 50 տոկոս (սահմանամերձ տարածաշրջաններում գործող կազմակերպությունների դեպքում մինչև 75 տոկոս) համաֆինանսավորման սկզբունքով: Սույն կարգի իմաստով ցուցահանդեսի մասնակցության կազմակերպչական ծախսեր կարող են համարվել.

1) մասնակցության վճար,

2) տաղավարի դիզայն,

3) տարածքի վարձակալություն,

4) կառուցապատում, կահավորում և դրա գործունեության համար անհրաժեշտ ծախսեր (անհատական և առանց միասնական տաղավարի մասնակցության դեպքում՝ ստանդարտ տաղավարի սկզբունքով):

III. Ցուցահանդեսներին դիմելու և աջակցության տրամադրման ընթացակարգը

Միասնական «հայկական» տաղավարով և «առանց միասնական» տաղավարի ձևաչափով մասնակցությունն իրականացվում է Ծրագրում նշված ցուցահանդեսների համար:

5. Նախարարությունը ցուցահանդեսի մասնակցության նախնական պայմանների և դիմելու վերջնաժամկետի վերաբերյալ իրազեկում է իրականացնում՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կայքէջում տեղադրված հայտարարության միջոցով:

6. Կազմակերպությունները մասնակցության հայտը ներկայացնում են մինչև հայտարարությամբ նշված վերջնաժամկետը (համաձայն հավելված 1 և հավելված 2-ի):

7. Ստացված հայտերի հիման վրա Նախարարությունը կազմակերպում է քննարկումներ կազմակերպությունների հետ և որոշում է ցուցահանդեսին մասնակցության ձևաչափը՝ հայտ ներկայացված կազմակերպությունների մեծամասնության ընտրության հիման վրա:

8. Ձևաչափի ընտրությունից հետո և կազմակերպությունների հետ համաձայնություն ձեռք բերելուց հետո Նախարարությունը պայմանագիր է կնքում մասնակցող կազմակերպությունների կամ կազմակերպությունները միասնական ներկայացնող կառույցի հետ:

9. Ցուցահանդեսին մասնակցության պայմանների վերաբերյալ նախարարության և կազմակերպության միջև համաձայնության ձեռք չբերելու և պայմանագիր չկնքելու դեպքում՝ գործընթացը դադարեցվում է:

10. «Անհատական» մասնակցության դեպքում ընկերությունները Նախարարություն են ներկայացնում՝

- ցուցահանդեսի մասնակցության հայտ՝ նշելով կոնկրետ ցուցահանդեսը, (համաձայն Ձև 1-ի և Ձև 2-ի),
- ցուցահանդեսի մասնակցության համապատասխան պայմանները և նախատեսվող ծախսերի նախահաշիվը (համաձայն Ձև 3-ի),

- ցուցահանդեսի մասնակցությունը հիմնավարող այլ փաստաթղթեր: (օրինակ՝ պայմանագիր կամ այլ):

11. «Անհատական» մասնակցության հայտերը ստանալուց հետո Նախարարությունն ուսումնասիրում է և տալիս է կամ ցուցահանդեսին մասնակցության հավանություն կամ մերժում՝ համապատասխան հիմնավորմամբ:

12. Հավանության տալու դեպքում Նախարարությունը կազմակերպության հետ կնքում է համապատասխան պայմանագիր:

IV .Այլ դրույթներ

13. Նախարարությունը ցուցահանդեսների մասնակցության կազմակերպչական աշխատանքների շրջանակներում կարող է ներգրավել նաև այլ կազմակերպություններին:

14. Ցուցահանդեսների մասնակցության աջակցություն ստացած կազմակերպությունները Նախարարություն են ներկայացնում հաշվետվություն՝ պայմանագրով նախատեսված ձևաչափին համապատասխան:

Ձև 1
Կազմակերպվող միջազգային ցուցահանդեսներին
կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի
մասնակցության աջակցության ենթակա
փոխատուցվող ծախսերի տրամադրման կարգի

_____

_____

(կազմակերպության/ների անվանում,

դիմողի անուն, ազգանուն, պաշտոն)

Մասնակցության հայտ

Հարգելի,

Հայտնում ենք, որ 20__ թվականի _____-ի __ _____ (նշել երկիրը և քաղաքը) կայանալու է «_____» ցուցահանդեսը:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում ենք վերոնշյալ ցուցահանդեսին մասնակցության հնարավորությունը դիտարկել կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջազգային ցուցահանդեսներին մասնակցության պետական աջակցության տրամադրման կարգի շրջանակներում:

Կից ներկայացնում ենք հայտ և ծախսերի նախահաշիվ:

Առդիր՝ __ էջ:

Հարգանքով՝

_____

Ձև 2
Կազմակերպվող միջազգային ցուցահանդեսներին
կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի
մասնակցության աջակցության ենթակա
փոխատուցվող ծախսերի տրամադրման կարգի

ՀԱՅՏ

ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱԽՍԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1.	Կազմակերպության անվանումը	
2.	Գտնվելու վայրը (բնակության վայրը), իրավաբանական հասցե, կոնտակտային տվյալները	
3.	Տեղեկատվություն գործունեության մասին (ուղղվածություն/բնագավառ)	
4.	Ցուցահանդեսի անվանում	
5.	Ցուցահանդեսի անցկացման վայր և ժամկետներ	
6.	Ցուցահանդեսի նկարագրություն (ուղղվածություն/բնագավառ)	
7.	Հիմնավորում մասնակցության կարևորության, ձևաչափի և նախատեսված գործողությունների մասին	
8.	Ցուցահանդեսին ներկայացվող արտադրանքի նկարագրություն	
9.	Նախկինում այդ կամ համանման ցուցահանդեսին մասնակցություն	
10.	Ցուցահանդեսի շրջանակներում	

	ակնկալվող արդյունքները	
11.	Այլ տեղեկատվություն դիմողի ցանկությամբ:	

_____

(ստորագրությունը, անունը, ազգանունը, պաշտոն)

____ _____20 թ.

Ձև 3
Կազմակերպվող միջազգային ցուցահանդեսներին
կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի
մասնակցության աջակցության ենթակա
փոխատուցվող ծախսերի տրամադրման կարգի

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Ցուցահանդեսի շրջանակներում կանխատեսվող և համաֆինանսավորման ենթակա ծախսային ուղղությունների և դրանց չափի վերաբերյալ

N	Ծախսային ուղղություն	Գումար		
		Ընդամենը	Նախարարություն	Կազմակերպություն
1.	Մասնակցության վճար			
2.	Տաղավարի դիզայն			
3.	Վարձակալություն, կառուցապատում			
4.	Կահավորում և դրա գործունեության համար անհրաժեշտ ծախսեր*			
5.	Ընդամենը			

* ծախսային ուղղությունները պետք է նշվեն մանրամասն ըստ առանձին տողերի

_____

(ստորագրությունը, անունը, ազգանունը, պաշտոն)

____ _____20 թ.